ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«30» ՕԳՈՍՏՈՍԻ 2019թ ԿՆՔՎԱԾ ՀՀԱՄ-ԱԼՀ-ԳՀԱՇՁԲ-19/07 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏ-ԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

գ.Ալագյազ <<29>>Հոկտեբերի 2019

«ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ջ. Մախմուդովի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Ադիբեկ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 30.08.2019թ. կնքված N «ՀՀԱՄ-ԱԼՀ-ԳՀԱՇՁԲ-19/07» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.5 և 8.6 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 «ՀՀԱՄ-ԱԼՀ-ԳՀԱՇՁԲ-19/07» ծածկագրով Պայմանագրի կատարման վերջնաժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և կատարման վերջնաժամկետ սահմանել 2019թ. Նոյեմբերի 29-ը ներառյալ:

2. Այլ պայմաններ

2.1. 30.08.2018. կնքված N «ՀՀԱՄ-ԱԼՀ-ԳՀԱՇՁԲ-19/07» ծածկագրով կապալային աշխատանքների ձեռքբերման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ալագյազի համայնքապետարան	«Ադիբեկ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտն մարզ գյուղ Ալագյազ 2-րդ փողոց շենք 10	ՀՀ Արմավիրի մարզ գ.Մերձավան Մասիսի 18
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«ԱՇԻԲ ԲԱՆԿ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 900482022028	Հ/Հ 2474200598230010
ՀՎՀՀ 05022985	ՀՎՀՀ 04720372
Համայնքի ղեկավար Ջ.Մախմուդով	Տնօրեն Հ.Հովհաննիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ